ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱՎ «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ» ԳՐՔԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԸ

Հունվարի 21-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի բարձր նախագահությամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնում տեղի ունեցավ Հայ Եկեղեցու երախտաշատ հոգևորական ու գիտնական, Կ. Պոլսի ժամանակի Պատրիարք (1889-1908 թթ.) Մաղաքիա արքեպս. Օրմանյանի «Ազգապատում» եռահատորի շնորհանդեսը՝ մասնակցությամբ Մայր Աթոռի միաբանների, գիտության և մշակույթի անվանի գործիչների:

Օրմանյանի կոթողային այս աշխատությունը Հայաստանում լույս է տեսնում առաջին անգամ՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակությամբ: Ինքը՝ գրքի հեղինակը ժամանակին իր աշխատությունը ներկայացրել է որպես «Հայ Ուղղափառ Եկեղեցւոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը յարակից ազգային պարագաներով պատմուած»: Այսօր էլ այն շարունակում է մնալ իբրև գիտական եզակի ու ամբողջական աղբյուր Հայ Եկեղեցու պատմությամբ հետաքրքրվողների համար: Այս մասին վկայեցին նաև հանդիսության բանախոսները, որոնք միաժամանակ անդրադարձան Օրմանյան Պատրիարքի կյանքին ու գործունեությանը: «Օրմանյանը յուրաքանչյուրին ներկայացնում է այն ճշմարտությունը, որ մեր ազգն ու Եկեղեցին միահյուսյալ են: Ես վստահ եմ, որ Հայաստանյայց Եկեղեցին պիտի շարունակի իր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում»,- ասաց Վեհափառ Հայրապետը՝ բարձր գնահատելով բոլոր նրանց, ովքեր ներդրում են ունեցել այս գրքի հրատարակության գործում:

Վեհափառ Հայրապետի օրհնությամբ գրքի տպագրմանը երկու տարի առաջ ձեռնամուխ էր եղել Երևանի պետական համալսարանի Աստվածաբանական ֆակուլտետի դեկան Տ. Շահե արքեպս. Աճեմյանը: Տպագրական ծախսերը հոգացել է հայաստանցի բարերար Տիգրան Կարապետյանը: Ինչպես նշեց Շահե Սրբազանը, ՀՀ ԳԱԱ-ի և Երևանի պետական համալսարանի Պատմության և Աստվածաբանության ֆակուլտետների ջանքերով նախատեսվում է հավելյալ՝ չորրորդ հատորյակի լույսընծայումը, որտեղ ներկայացված կլինեն «Ազգապատումում» տեղ գտած տեղանունների, անձնանունների ու թեմատիկ ցանկերը: Առաջիկայում ընթերցողները կարող են օգտվել նաև գրքի համակարգչային տարբերակից:

«Ազգապատումի» երրորդ այս հրատարակությունը լույս է ընծայվել Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի առիթով և մնայուն հիշատակ է՝ նվիրված երանաշնորհ Պատրիարքի ծննդյան 160-ամյակին:

Օրմանյան Պատրիարքը հեղինակ է նաև մեծարժեք այլ գործերի, այդ թվում և ֆրանսերենով գրված «Հայոց Եկեղեցին», «Խոհք եւ խօսք» հուշագրության և «Համապատում»-ի: Վերջինս չորս Ավետարանների համապարփակ մեկնությունն է, որի արևելահայերեն թարգմանությունը Հայաստանում լույս է տեսել մի քանի տարի առաջ՝ կրկին Մայր Աթոռի հրատարակությամբ: